ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ 90-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

2011 թ. հունվարի 22-ին լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ - պետական մրցանակների դափնեկիր, ականավոր կոմպոզիտոր և տաղանդավոր դաշնակահար Առնո Հարությունի Բաբաջանյանի *(1921–1983) ծննդյան 90-ամյակը, որի կապակցությամբ ստեղծվել էր պետական հոբելյանական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ:*

Հոբելյանական միջոցառումների շարքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ 2012 թ. մայիսի 17-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում իր նիստերը գումարեց Ա. Բաբաջանյանի ստեղծագործությանը նվիրված գիտաժողովը: Զեկուցումներով հանդես եկան գիտնականներ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից և Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանից, ովքեր իրենց զեկուցումներում ներկայացրեցին կոմպոզիտորի բազմաժանր ստեղծագործությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը՝ *նշելով, որ Ա. Բաբաջանյանը մեր երաժշտական մշակույթի այն խոշոր և առավել ինքնատիպ երևույթներից է, ում ծննդյան յուրաքանչյուր տարեդարձ ընկալվում է որպես հոբելյան: Ա. Բաբաջանյանի ստեղծագործական և կատարողական գործունեությունը դեռևս կենդանության օրոք արժանացել է երաժշտագետների սևեռուն ուշադրությանը: Ու թեև հրատարակված մենագրությունների և հոդվածների շնորհիվ հայ (և ոչ միայն հայ) երաժշտագիտության մեջ վաղուց արդեն ձևավորվել ու բեղմնավոր ճանապարհ է անցել բաբաջանյանագիտությունը, սակայն այսօր էլ հետաքրքրությունը չի սպառվել և չի սպառվի հետագայում ևս: Կարևորելով Ա. Բաբաջանյանի տեղն ու դերը XX դարի հայ և խորհրդային երաժշտական մշակույթի բնագավառում՝ նա գոհունակությամբ նկատեց, որ նստաշրջանի աշխատանքներին մասնակցում են ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ մասնագետներ՝ գիտակրթական տարբեր օջախներից:*

Այնուհետև հրապարակվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Ա. Բաբաջանյանի մտերիմ բարեկամ Էդվարդ Միրզոյանի՝ *նստաշրջանին հատուկ հղված ողջույնի ջերմ ու սրտառուչ խոսքը, որտեղ մասնավորապես նշված էր. «Սրտանց ուրախ եմ և հիացած իմ սիրելի Առնոյին նվիրված նախաձեռնության համար: Ցավում եմ, որ ներկա չեմ կարող լինել: Շատ կուզեի մասնակցել և խոսել նրա ստեղծագործության, արտակարգ տաղանդի և մեր մտերմության մասին»:*

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեքիջյանը *և պատմեց հետաքրքիր դրվագներ իրենց հանդիպումներից: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր* Շահեն Շահինյանը *և Ա. Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ* Ժակ Հակոբյանը: *Առաջին նիստը, որը նախագահում էր* Ա. Աղասյանը, *սկսվեց ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր* Անանա Ասատրյանի *«Ա. Բաբաջանյանի երգերը» թեմայով զեկուցումով: Ընդգծելով այն հանգամանքը, որ Ա. Բաբաջանյանի երգերը բացառիկ երևույթ էին հայ և խորհրդային երաժշտության մեջ, դրանցից շատերը ստեղծման օրից դառնում էին հանրահայտ (շլյագերներ) և դրանք երգում էր ողջ երկիրը, բանախոսը մեր երկրում մշակութային քաղաքականությունն իրականացնող պետական այրերին խնդրեց «վերջապես հայկական էստրադային երաժշտությունից դուրս մղել դիլետանտիզմը, հնարավորություն ստեղծել, ստիպել-պարտադրել, որ հայ երգիչները կատարեն պրոֆեսիոնալ կոմպոզիտորների բարձրարժեք երգերն ու, վերջապես, դադարեցնել ժողովրդի ճաշակի սրընթաց անկման խթանումը, հայկական կինոարտադրության մեջ ներգրավել պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին, ֆիլմերում ու սերիալներում օգտագործել նրանց գրած երաժշտությունը»:*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Կարինե Ջաղացպանյանը *խոսեց Ա. Բաբաջանյանի դաշնամուրային տրիոյում ազգային և համաեվրոպական երևույթների սինթեզի մասին: Զեկուցողը բացահայտեց այդ զուգորդումների օրգանական և համոզիչ դրսևորումները Ա. Բաբաջանյանի երաժշտության մեջ:*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ժաննա Զուրաբյանի *զեկուցումը նվիրված էր «Գարուն ա» երգի ստեղծագործական երկու վերակերպավորումներին: Բանախոսը համեմատական դիտարկմամբ վեր հանեց ժողովրդական «Գարուն ա» երգի հատվածային մեջբերման ընդհանրությունները Էդ. Միրզոյանի լարային կվարտետում և Ա. Բաբաջանյանի դաշնամուրային տրիոյում, որոնք, ստեղծված լինելով 1940–50-ականներին, նոր հետաքրքրություն առաջացրեցին «Գարուն ա»-ի հանդեպ հայ կոմպոզիտորների կողմից և հիմնավորեցին այդ երգի հուզական-կերպարային ընկալումն ու վերաիմաստավորումը՝ որպես հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ կապված երաժշտական սիմվոլիկ նյութ:*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր Միխայիլ Կոկժանը *ներկայացրեց Ա. Բաբաջանյանի Ջութակի կոնցերտի առաջին մասի երաժշտական ձևի բաժինների տարածական-ժամանակային հարաբերակցությունների կերպարային վերլուծությունը:*

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի *«Ա. Բաբաջանյանի դոդեկաֆոնիկ ստեղծագործությունների շուրջ» զեկուցումը: Բանախոսը եզրակացրեց, որ «Ա. Բաբաջանյանի որոշ գործերում հստակ և ամբողջականորեն դրսևորվում է XX դարի մոդեռնիստական ուղղություններից մեկը՝ տասներկուտոնային համակարգը, սակայն զարգացման տրամաբանության տեսանկյունից այն դասական դոդեկաֆոնիայի կանոններին միայն մասամբ է հետևում և ձեռք է բերում տեխնիկական լուծումների և գեղագիտական մոտեցումների յուրովի մեկնաբանություն՝ համապատասխան հայ ազգային երաժշտամտածողությանը»:*

Նստաշրջանի երկրորդ նիստում, որը վարում էր Ա. Ասատրյանը, *առաջինը հանդես եկավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, արվեստագիտության թեկնածու* Վալենտին Թովմասյանը՝ *«Ա. Բաբաջանյանը և Հայկական հնգյակը» բանախոսությամբ:*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Եփրեմյանի *«Հենրիխ Լիտինսկու դասարանում» զեկուցումը վերաբերում էր մեզանում քիչ արծարծված թեմային, այն է՝ Մոսկվայում Հայաստանի մշակույթի տանը հայ կոմպոզիտորների, այդ թվում՝ Ա. Բաբաջանյանի վերապատրաստվելու տարիներին կոմպոզիցիայի դասարանի ղեկավար Հենրիխ Լիտինսկու մեթոդաբանության ընդգծված հակախաչատրյանական ուղղվածությանը:*

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու Սաթենիկ Մելիքյանը *«Ա. Բաբաջանյանը հայ ծաղրանկարիչների աչքերով» զեկուցման մեջ անդրադարձավ Սերգեյ Արուտյանի, Գեորգի Յարալյանի և Վարդան Ամեմյանի ընկերական շարժերին, որտեղ յուրաքանչյուրն իր նկարելառճին համապատասխան պատկերել է մեծանուն կոմպոզիտորին:*

Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի աշխատակից Շուշան Հյուսնունցն *անդրադարձավ Ա. Բաբաջանյանի դաշնամուրային պոեմին, որը դիտարկվեց որպես հայ դաշնամուրային գրականության մեջ 1960-ականներին սերիալ տեխնիկայի կիրառման առաջին փորձերից մեկը, ուր զարմանալիորեն զուգակցվում են արդի երաժշտամտածողության կոնկրետ արտահայտչամիջոցները ազգային երաժշտության կերպարային, թեմատիկ և երաժշտալեզվական առանձնահատկությունների հետ:*

ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովի *զեկուցումը նվիրված էր կինոստեղծագործության հորինվածքում Ա. Բաբաջանյանի երաժշտության դերին՝ «Առաջին սիրո երգը» և «Հարսնացուն Հյուսիսից» ֆիլմերի օրինակով:*

Ամփոփելով գիտաժողովի արդյունքները՝ Աննա Ասատրյանը *կարևորեց զեկուցումների բովանդակությունը, նշելով, որ տարբեր տեսանկյուններից անդրադառնալով Ա. Բաբաջանյան ստեղծագործողին՝ բանախոսներն ամենայն խորությամբ ներկայացրեցին կոմպոզիտորի երաժշտական հարուստ ժառանգությունը:*

ԻՆԵՍՍԱ ԱՎԱԳԻՄՈՎԱ